



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

WLn

✓
2151

1999

ՈՒՂՂԱՆՈՍՈՒԹԻՒՆ



УЧЕБНО-МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ



ՈՒՂՂԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԸՐԴԻ ՀԵՅ ԼԵՉՈՒԻՆ

ՅՕԲԻՆՎԱԾ

ՈՒՍՄՆԱԿԱՆ ԽՈՐՀԸՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ ՏՊԱՐԱՆ



HEAD OFFICE

1881

1881



42156.60

215 2156

1881

ԱՌՆՊԱՐԱՆ

Եզուս կ'ըսվի ան կարողութիւնը՝ որով մարդ իր մտածութիւնը յօդաւոր ձայնով կը յայտնէ : Ըս կարողութիւնը բնական ձիւրք մըն է . և միշտ նոր ծնունդն իր ծնօղնէրէն լսելով, իր զաւկնէրուն խօսելով կ'աւանդէ :

Եզուս մը՝ որդիէ որդի աւանդութիամբ անցնիլու ատեն, իր դարական ընթացքին մէջ մեծամեծ փոփոխութիւններ կրնայ կրել . որոնք ժամանակին պարագանէրէն կախում ունեն : Ժամանակով լեզուի մը վրայ էզած փոփոխութիւններն էն՝ նորանոր դաղափարներու իմաստ յայտնող բառերուն աւելնալը, բառերու մէջէն դրերու պակսիլը, դրերու հընչման այլայլիլը, եւ այլն : Արբեամս աս փոփոխութիւններն այնչափ մեծ էն՝ անցած ժամանակին երկարութիան համեմատութիամբը, որ եթէ լեզուի մը արդի վիճակը՝ նախկին վիճակին հետ բաղդատովի, կը տեսվի որ մի և նոյն լեզուն՝ հին վիճակին մէջ ուրիշ լեզու մըն է, նոր վիճակին մէջ՝ ուրիշ : Ըս դէպք տեսված է Հայ, Յոյն, Հռոմացի և

այն , լեզուններուն վրայ . և իւրաքանձիւրին գըրաբառէն ծագած է իր աշխարհաբանը . ինչպէս Հայերէնէն՝ Արմէնէրէնը , այսինք՝ արդի լեզուն , Հելլենէրէնէն՝ Ռումէքան , Ատինէրէնէն՝ Իտալէրէնն ու Ֆրանկէրէնը և այլն :

Ասկէ քանի մը դար առաջ՝ երբ մարդկային իմացականութիւնը դեռ չ'էր արթնցած իր թմրութենէն , ամէն ազգ իր մէջ՝ այնպիսի մարդերու ժողով մ'ունէր , որոնք ազգին ուսման կաննէրը կը սեպվէին . և ասոնք իրենց գրվածներուն լեզուն՝ քիչ շատ իրենց նախնիքներուն լեզուին կը նմանցնէին . որով գէթ ուսմանական ներու մէջ՝ խանգարված կերպով մը հին լեզուն կը պահվէր . ու գրածնին իրենց համար միայն կ'ըլար : Արբ մարդկային միտքը քիչ մ'արթննալ ըսկսեց , և ուսմանականներն աւելի խելք հասուցել ըսկսեցին ժողովուրդներու կրթութիան հարկաւոր եղած միջոցներուն , իմացան որ մինչեւ իրենց գրվածները ժողովուրդները չը հասկընան , անոնցմէ յառաջդիմութիւն ըսպասէլն աւսուցուտ է : Աս քանիս համար երկու բան պէտք էր . կամ ամբողջ ազգի մը ուսմին՝ իր հին ու քանի մ'ուսմանականներու հասկըցած լեզուն ուսուցել , կամ ուսմին նոյն ատեն խօսած լեզունովը գրել : Առջինը՝ փորձեցին տեսին որ անկարելի է . երկրորդը՝ խիստ յարմար : Ան ատենէն ի վեր է , որ Աւրոպայի վարժարաններու մէջ՝ Ատինէրէնի տեղ՝ իւրաքանձիւր ազգի իր խօսած լեզուն տի-

րէց : Յոյնէրը՝ Հելլենիքէնը կենդանացնէլու համար երկար ատեն աշխատիլէն ետեւ , վերջապէս Տումէքաին ուղղախօսութիւն ու բառցոյց շինէցին : Օսմանեան տէրութիւնն ալ որ քանի տարիէ ի վեր իր ազգին կրթութիանը ուշ կը դնէ , ան ալ էտես որ Արպէրէնի հետ խառն մութ տաճկէրէնը յարմար չէ՛ ժողովըրդին ուսմական յառաջդիմութիանը . ուստի նոր ուղղախօսութիւն մը հանէց բուն Օսմանեան լեզուին , պարզէլով ղանի ըստ կարի . և միանգու մայն Ինչին ոճը պարզէց ու դիւրացուց : Հիմա Աւրոպայի մէջ ժողովուրդ մը չ'ի կայ , որ խօսած լեզուովը չը գրէ ու չ'ուսնէ իրեն պէտք էղած բանէրը : Նոյնպէս կ'ընեն արեւելքի մէջ տիրող գլխաւոր երկ ազգէրը՝ Օսմանցին ու Պարսիկը :

Մեր ազգն ալ շատուց ի վեր իր հին լեզուն՝ ան վսեմ գրաբառը կորուսած , կը զգար իր կրթութութիանը համար ընդհանուրին հասկընալի ազգային լեզուի մը կարօտութիւնը : Այ լեզուն կար , բայց այնչափ խեղճ վիճակի մէջ էր , որ ոչ որ կը համարձակէր լեզու ըսելու անոր : Սակայն տաս տաս հինկ տարիէ ի վեր , ուսմական անձէր՝ մասնաւոր ու պարբերական գրվածներով ղանի շատ շտակէցին շտկըտէցին , և ազգն իր հին կորուսած լեզուին տեղ՝ ունէ ասօր , թէ ոչ կատարեալ , գէթ բաւական գործածելի արդի լեզու մը ազգային , ղոր շատ մարդիկ իրարմէ քիչ տարբերութիամբ կը գրեն , ու հասարա

կութիւնը՝ քանի կ'երթայ, վարժ ու անուշ
կերպով կը խօսէ :

Յայանի է որ Պօլիսի մէջ գործածված արդի
լեզուին վրայ է խօսքերնիս . վասն զի Պօլսէցուն
խօսած Հայերէնը՝ թէպէտեւ աւելի խառն է օ-
տար բառերով քան ուրիշ տեղացոյց Հայերէնը,
սակայն արտասանութիան կողմէն աւելի յստակ
աւելի մաքուր ըլլալէն զատ՝ երկու գլխաւոր պատ-
ճառներ կը վաւերացնէն անոր նախապատու-
թիւնը : Նախ՝ Պօլսէցուն խօսածն ասօր ազգին
մեծագոյն մասին լեզուն կը սեպվի . զի ոչ ուրէք
այնքան Հայերու բազմութիւն մէկ տեղ հաւքը-
ված կը տեսվի՝ որպէս ի Պօլիս . և բազմութիան
լեզուն է անտարակոյս ընդհանուրին ալ լեզուն :
Երկրորդ՝ մայր-բաղբին լեզուն աւելի գիւրան-
կը տարածվի քան ո՛ր և է գաւառական բարբառ .
վասն զի հոն յաճախելով գաւառականներու
բազմութիւն, և հոն՝ արհեստական ու վաճառա-
կան զանազան գործողութիւններէ հարկադրված՝
երկար ատեն մնալով, երբ իրենց երկիրը դառ-
նան, հետէնիս կը տանէն վերջապէս մայր-
բաղբին լեզուն ալ :

Աս արդի լեզուն՝ կը տեսնէնք որ, ամէն տեղ,
օրէ օր փոփոխութիւններ կրէլու վրայ է . և աս՝
երկու պատճառով . մէյ մ'որ՝ կատարելութիւն
ըստացած լեզու մը չ'է . երկրորդ որ՝ ուղղախօ-
սութիւն ու բառցոյց չ'ունէ : Ասոր համար՝ ա-
մէն մարդ ուզած կերպովը կանոն և ուղղագրու-

Թիւն կը սեփհականէ իրեն : Այ ետքի պատճառը՝ անանկ անպատեհութիւն մըն է , որ կրնայ լեզուն շատ դժար ու անկանոն ընէլ ատենով . վասն զի ժամանակը հաստատութիւն կուտայ սովորութիան հնարած կերպ կերպ այլընդակ կիրառութիւններուն : Վարձեալ աս անպատեհութիւնը՝ նոյն լեզուով գրողներուն մեծ դժարութիւն կը հանէ . վասն զի իւրաքանձիւր որ չի գիտնայ որ կանոնին հետեւիլ :

Արդ՝ աս արդի լեզուն կանոնաւորելու , ե միանգամայն կատարելութիան շաւղին մէջ քայլ մ'առաջ մղելու մըտքով է , այսինք՝ անոր աւելի պարզութիւն , ճշտութիւն , անուշութիւն , ուղղագրութիւնը դիւրութիւն , ու բառերուն համառօտութիւն տալու մըտքով է , որ ձեռք զարկինք՝ ուսմական անձերու խորհրդակցութիամբ , ուղղախօսութիւն մը յօրինելու նոյն լեզուին : Այ աշխատութիւնն ուշադրութիամբ աչքէ անցնողը կը տեսնէ , որ սովորութիան տրած կանոններուն հետեւած էնք ամէն ուր որ բանաւոր պատճառն ուրիշ կերպ մը չ'է ցուցած . միայն զգուշութիամբ ու հասուն դատմամբ ա նոնցմէ ինչ ինչ ամփոփած ու միաձեւութիան տակ ձգած էնք : Սեր աշխատութիան ընթացքին մէջ՝ արդի լեզուն գրաբառին ըստ կարի մօտեցնելու նպատակն ալ երբէք աչքէրնէս չի հեռացնելով , ուղիղ տեսութիւնն ու միաձեւութիւնը՝ մեզի երկու գլխաւոր դիտակէտներ

էզած էն : Ինչ որ գրաբառին մօտ երթալ կրնանալով՝ ուղղութիան ու միաձեւութիան դէմ կը մեղընչէր, զանի հարկ կ'ըլլար գաւառական բարբառնէրու մէջ սովորյթ էզած կերպին հետեւեցնելով համեմատել մեր կանոնին :

Գլխաւոր բան մը աս ուղղախօսութիան մէջ ան է, որ հողովումը մէկի վերածած էնք. որով ամէն բառ ընդհանրապէս միօրինակ կրնան հուրովիլ նոյն վերջաւորութիամբ. բաց բանի մը բառէր, որոնց արտուղութիւնն անկարելի երեւցած է մեզի կանոնաւորել : Աս բանս մեծ պարզութիւն ու զիւրութիւն կը բերէ լեզուին. և ամէն բառ՝ մանաւանդ յատուկ անուններն իրենց ամբողջ գիրերն ու ճիշտ հրնչումը կը պահէն ամէն հողովնէրու մէջ. որ խիստ հարկաւոր բան է :

Իարձեալ՝ բայերուն խոնարհման գաղանխքը լաւ մը դիտելէն ետեւ, բոլոր բայերն իրեք յանգուով, իրեք կանոնաւոր խոնարհման տակ ձգած էնք. ասով դուրսն ամէնեւին անկանոն բաց չ'մնայ : Գրաբառին չորրորդ լծորդութիւն ըսած ուլ յանգը մէկգի թողէցինք. ասոր ալ պատճառ՝ արդի լեզուին մէջ հազիւ մէկ երկու բայ կը գտվէր ուլ յանգուով, որոնք ո՛չ միայն չ'արժէն զատ խոնարհում, այլ մանաւանդ միւս յանգերուն մէկին տակ խիստ վայելուչ կրնան երթալ. և ասով չորրորդ յանգի մը աւելորդ բեռ կը վերնայ :

Աս երկ երեւելի բաներէն զատ, այսինք՝ հողովումին մէկի, և խոնարհումին եւ յանգի վերածելէն, խօսքի մատերուն վրայ ալ մանր մունր փոփոխութիւններ ըրինք. և նոյն իսկ ուղղախօսա, կան բառերն ալ տեղ տեղ փոխեցինք: Սահմաններու մէջ՝ աւելի պարզ աւելի ճշգրիտ ըլլալուն նայեցանք. ամէն բանին պատճառները՝ տղայական մտքին տկարութիանը համեմատելով բացատրել ուզեցինք: Ուղղագրութիան բարեկարգութիւնը հարեւանցի մը շօշափեցինք, սովորոյթը չ'ապստամբելու չափ. 'զոր եթէ գրականները միտք առնել ուզէն, ու սովորութիւնն աս բանիս մէջ մէյ մը բանականութիան կ'ողմնանցնի, կատարելութիան ու դիւրութիան մասին՝ ամբաւ օգուտներ կը քաղէ արդի գրականութիւնը: Արջապէս, տղայական մտքը՝ ուրիշ լեզուներու ուսման՝ անգգայի կերպով մը պատրաստելու դիտաւորութիամբ, հայ ուղղախօսութիան մասնաւոր ըսկրզբունքները՝ իմաստասիրական ուղղախօսութիան ընդհանուր ըսկրզբունքներուն վերածել ջանացինք, որչափ կարելի էր: Իայց աս ամէն բան չէ՛ թէ նորածեւութիան մը մըտքով, այլ լեզուին կանոնաւոր ընթացք մը տալու դիտաւորութիամբ. և ասոր համար՝ թէ ազգային և թէ այլազգի ուղղախօսութիւններ ու բառցոյցներ երկար խորհրդակցութիամբ քննելով:

Աս ուղղախօսութիւնը՝ երբ ըլլայ պիտի ել

նէր . եթէ մէկը չը հանէր , մէկ ուրիշ մը հանէրու էր . վասն զի լեզու մը՝ որով ազգ մը կը կարգայ , կը գրէ ու կը խօսի , անց ուղղախօսութիւն չ'ըլլայ : Ուղղախօսութիւն կանուխ ելնիլուն աղէկութիւնը սաս է որ , քանի որ լեզուն չ'է խորութիւնցած այլեայլ կանոններով ու զարտուղութիւններով , 'զանի պարզութիւն մէջ կը սահէ ուղղախօսութիւնը . և դեռ հաստատութիւն չ'առած քանի մ'անկանոն ձեւեր՝ կրնայ ըսկիզբէն վերցնել :

Աւելորդ է հոս երկան բարակ ցուցել՝ թէ աս ուղղախօսութիւնը հարկ էր տալ արդի լեզուին : Արբ ան է և պիտի ըլլայ մեր ազգին ընդհանրական լեզուն , տարակոյս չ'ը մնայ որ ուղղախօսութիւն մ'ալ պէտք էր անոր : Ասորս ազգին մէջ երեւցած գրվածներուն հարիւրին հինկը հազիւ գրաբառ է . իսկ ինսուն-հինկը աշխարհիկ լեզուով է : Ան վսեմ ու հարուստ գրաբառն անկարելի է ազգին ընդհանրութիւնը լեզու ընել . թող որ Վորենացիի , Աղիշէի , Ազնիկի ան ըսքանչելի լեզուն՝ ազգն ոչ երբէք խօսած պիտի ըլլայ . հասպա կ'երեւայ որ ազգին մէջ ամէն ատեն ռամկական լեզու մը կայ էղած , ուսմնաւ կանէն շատ տարբեր , գուցէ մեր արդի լեզուէն աւելի մօտ գրաբառին : Այն իսկ իրարու մօտ ժամանակի հեղինակներուն գրվածներուն լեզուն անգամ՝ իրարու խիտ աննման է : Աղիշէին ու Ա . Փարսէցիին մէջ քիչ միջոց կայ . սա

կայն գրվածնէրնուն լեզուին տարբերութիւնը՝ միջոցէն մեծ է : Ար Հայազգի չ'ուզէ գրաբառն իր ազգին բերնէն լսել, սակայն որ յառաջագէմ կ'ուզէ սուտ յուսով ինք 'զինք խաբէլ անկարեւ լի բանին համար՝ ու անդին ընէլիք հարկաւոր բանը զանց ընել :

Աս մըտքով է ահա, որ մենք աս գործն ի լոյս ընծայէցինք. փափաքելով՝ որ գէթ գրաբառին տեղ, անոր զաւակը՝ արդի լեզուն՝ սլատշած վա յելլութիւննէրն ու կանոնաւորութիւնն ըստա նալով ազգին լեզուն ըլլայ և ո՛չ թէ խառնաբըն գոր : Աւ եթէ աս փափաքնիս կատարվի, ան աւ տեն գուստրն իր մօրմէն վար չը կրնայ մնալ. և եթէ վսեմութիամբ չէ՛, անուշութիամբ ու սլար զութիամբ կրնայ 'զանի գերազանցել :

Արդի լեզուին վրայ աւելնալու կատարելութիւննէրը՝ մենք մըտքէրնիս չ'էնք գրած որ մեր հանած աս ուղղախօսութիամբը սխտի լմննան, հապա ազգիս ուսմնական անձէրուն՝ արձակ ու չափով ընտիր ընտիր գրական աշխատութիւննէրովը . որոնք՝ կը յուսանք որ, աս ուղղախօսութիւնն ալ ներօղամսութիամբ կ'ընդունեն, և անոր թերութիւննէրը՝ իրենց հմուտ գիտօղութիւննէրովը լրացնելէն ետեւ, ձեռք կը զարնէն հարկաւոր գիրքէրու հեղինակութիան՝ կանոնաւոր լեզուով մը :

Ազգիս մէջ կենդանացած յառաջգիմական ու գիէն կ'ըստասէնք մէնք 'զասի. և անոնցմէ՝ որ

ազգին մտաւոր կրթութիանը կը պարսպին սիրով,
 ակնկալութիւններ ունենք: Պէտք է որ ան բա-
 րերար անձերը՝ մեր արդի գրականութիան ոճը
 մաքրեն, պարզեն ու ճշտեն. և յստակ գրու-
 թիամբ ու առողջ իմաստներով՝ նոր ընթացք մը
 պատրաստեն ազգային դաստիարակութիան, որի
 մէջ նոր ու յաջորդ ծնունդը կարենայ գտնել
 իր մշտքին սնունդը:

ՈՒՂՂԱԿՆԻՑԱՌԻԹԻՒՆ

ԵՐԴԻ ՀԱՅ ԼԵՉՈՒԲՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. Հայ Ուղղախօսութիւնը՝ հայերէն անսրխալ խօսելու և գրելու արհեստն է :

2. Խօսիրը՝ ձայնով կ'ըրայ . գրելը՝ նշանով :

3. Չայնը՝ սր և Տառ կ'ըսվի , երկու տեսակ է . պարզ ու Բաղադրեալ :

4. Պարզ ձայնն ան է , որ առանց ուրիշ ձայնի մ'օգնութիան՝ ինքիրմէ կը հընչվի :

5. Բաղադրեալ ձայնն ան է , որ առանց պարզ ձայնի մ'օգնութիան չի կըրնայ հընչվիլ :

6. Սէր լեզուին տառերն եստունութ էն . որոնք գրաւոր խօսքի մէջ՝ սոն նշաններով կը յայտնրվին . ա , Բ , գ , դ , ե , շ , է , ը , Լ , ժ , ի , Լ , է , ծ , ի , է , յ , շ , ճ , ճ , յ , ն , շ , ո , շ , պ , ջ , ա , ս , վ , փ , ք , ց , ո , փ , ք , օ , Ֆ ⁽¹⁾ : Դիք կամ նշանայտն կ'ըսվին ասոնք , վասն զի լեզուին ձայ-

(1) Աս տառերուն անունները՝ ինչպէս ապ ցեոք է նէ , Սեպաբէին մէջ ցուցինք : Պարզ ձայները՝ քնչ հընչում ունեն նէ բառէ .

նէրը զրոշմէլու համար հնարված նշաններ էն :

7. Ըստնցմէ ութը՝ ա, ե, է, ը, ի, օ, ո, ս, պարզ ձայնի նշաններ էն, և ինչնայն կ'ըսվին : Ս'նացածները բազազրեալ ձայնի նշաններ էն, և քաղայն կ'ըսվին :

8. Սէկ կամ քանի մը տառ իրարի քով գալով՝ վանկ կը շինէն. վանկերը՝ քաւ կը շինէն. և բառերը՝ խօս :

9. Վանկը՝ մէկ հընչմամբ բերնէ ելած ձայնն է :

10. Բառը՝ մէկ կամ քանի մը վանկով շինված նշանական ձայնն է :

11. Խօսքը՝ բառերու մէկ տեղ գալովը ձեւացած իմաստն է, որ և բան կ'ըսվի : Օրինակ .

րու մէջ, նոյն պարզ հընչու մը կը վայել բնականապէս իրենց անուն, և չէ թէ բազազրեալ ձայնէրով խառն հընչում մը, որ հեգէլու ա տեն կը կորուսի. ինչպէս էին հին անունները՝ այք, էէլ, էէլ, ինի, և այլն : Նոյն խորհրդածուծիւն՝ բազազրեալ ձայնէրուն համար. ուրովհետեւ ասոնք միշտ պարզ ձայնի մը կարօտ էն հընչիլու համար : բնութիւնը կը ցուցէ ան պարզ ձայնը ը տառին մէջ. զոր օրինակ երբ քէրնք բառը կարգալ ուզէնք, բըրինք գրվածի պէս կը կարդանք, ը տառը բնականապէս ըստեղծելով հան : Աս բանիս ուղղութիւնը, և ասով հեգէլու ատեն աղին համար եղած գիւրութիւն օգուտը տարակոյս չը վերցնելով : Ապրտէին աս անունական բարեկարգութիւնն ինքնին կ'արդարանայ :

Ան գիրերն որ իրենց ձայնակից եղող գիրերուն հետ կըրնային շփոթիլ. անոնք միայն է ով գրիք, իսկ միւս բոլոր բազազայնները՝ ը ով : էէ, գէ, դէ, յէ, ջէ, ֆէ գիրերը՝ լծորդ ու յայնայից էն է, իը, ու, ծը, ճը, իհը գիրերուն հետ, և շատ անգամ աս ետքիններն առջիններուն տեղը կը գրվին. ուստի գէն՝ աւելի իը ին մօտ հընչելու է քան ու ին, որի հետ լծորդ չ'է. դէն՝ ու ին մօտ քան իը ին. յէն՝ ծը ին մօտ քան յը ին. ջէն՝ ճը ին մօտ քան յը ին և իհըն՝ ֆէ ին մօտ քան քէ ին : Ճիշտ հայկական հընչումն աս է :

ա սառ ,
 աբ վանկ ,
 աբգար բառ ,
 Աբգար հասարայ Քրիստոսի խօսք :

12 . Սխալանի կ'ըսվի ան բառը՝ որ մէկ վանկ
 ունէ : Ըստճալանի կ'ըսվի ան՝ որ մէկէն էվէլ վանկ
 ունէ : Օր . սիբ՝ միավանկ . սիրոն՝ երկավանկ .
 սիրական՝ եռավանկ . ընկերասեր՝ բառավանկ . ընկեր-
 սիրոնիւն՝ հնգավանկ :

13 . Պարզ կ'ըսվի ան բառը՝ որ մէկ նշանա-
 հան ձայն կը պարունակէ , առանց ծայրն ան-
 նըշան մասնիկ ունէլու : Օր . հոբ , ջոբ , ճարդ ,
 հոգի , և այլն :

14 . Բարդ կ'ըսվի բառը՝ երբ մէկէն էվէլ նը-
 շանական ձայն պարունակէ : Օր . հըրիշ , ջըրիշ ,
 ճարդասեր , հոգեպես , սոսոսոս , և այլն :

15 . Կցորդասոր կ'ըսվի բառը՝ թէ պարզ ըլլայ
 և թէ բարդ , երբ մէկ կամ երկու ծայրէն ան-
 նըշան մասնիկ մ'ունէ , որով բառին նշանակու-
 թիւնը կը զանազանի : Օր . անիրաւ , անիրաւ-
 ունիւն , աղատական , հոգէոր , երկնային , այցել-
 ում , այցելոյն , այցելարան , և այլն :

16 . Իրված օրինակներէն կը տեսվի . նախ՝
 թէ բարդութիւնն ու կցորդութիւնը երբեմն
 անյօդ կ'ըլլան , ու երբեմն ա , է , ու բարդիչ
 յօդերուն՝ երկու բառին մէջ տեղը մասնիկով .
 երկրորդ՝ թէ բառ մը կըրնայ միանգամայն բարդ
 ու կցորդաւոր ըլլալ . ինչպէս , այցելում , այցելոյն ,
 այցելարան բառերը՝ այց ու էլ բառերով բարդված ,
 և ում , ոյն , բան մասնիկներով ալ կցորդված :

17. Ուղղախօսու թիւնն երկու մաս կը բաժնովի. առջին մասը՝ բառէբու վրայ կը խօսի, և կը կոչվի Բառգիտութիւն. երկրորդ մասը՝ խօսքի վրայ, և կը կոչվի Բանկալորութիւն:

18. Խօսքի մէջ ութ տեսակ բառ կը գործածովի, որոնք խօսքի մասեր կ'ըսվին. և սաննք էն. Անան, Սոյանոան, Դերանոան, Պարանոան, Բայ, Մովբայ, Բառախոյ, Չայնարի:

Բառգիտութիւն գլուխներուն մէջ ուսնէնք խօսքին սս ութ մասերը:



ԲՆՈՒԳԻՏՈՒԹԻՒՆ

ԼՈՑ ԻՆ ԳՂՈՒԽ

ԱՆՈՒՆ

19. Ընունը բառ մըն է, որ անձ մը կամ իր մը կ'իմացնէ. իմացուցած իրը կամ առարկան՝ թէ նիւթական կրնայ ըլլալ, ինչպէս, հող, ջուր. և թէ աննիւթ. ինչպէս, յոյս, սէր :

20. Ընունը գործնական կերպով մը կը ճանչլի, երբ ո՛վ է կամ ի՞նչ է հարցումներուն պատասխան կրնայ ըլլալ. և միանգամայն որպիսի և որչանք բառերուն հետ կրնայ գրլիլ : Օր. ո՞վ է. — Տրտաք : Ի՞նչ է. — գիրք : Որպիսի և որքան գիրք : Ահա Տրտաք ու գիրք բառերն անուն են :

21. Ընունն երկու կը բաժնլի. հասարակ, յարուսի :

22. Հասարակ կ'ըսլի ան անունը՝ որ մի և նոյն տեսակէ իւրաքանձիւր անհատի և իւրաքանձիւր առարկայի կը յարմարի, ինչպէս, մարդ, լէռ, քաղաք, և այլն :

23. Ետուուկ կ'ըսլի ան անունը՝ որ մասնաւոր անձի մը կամ մասնաւոր առարկայի մը միայն սեփական է. ինչպէս, Տիգրան, Սասնա, Երեմիա. և այլն :

24. Ընունը ինչ ունի, որ երկու է. ելակի, յոյնակի :



25. Եղակի թիւը՝ միութիւն կը ցուցնէ . զոր օրինակ՝ Բառ, լեզու :

26. Յարնակի թիւը՝ շատութիւն կը ցուցնէ . զոր օրինակ՝ Բառեր, լեզուներ :

27. Ղրված օրինակներէն կը տեսիլ, որ առաւել մը յոբնակի շինելու համար երկու մասնիկ կայ . միավանկ բառերուն ծայրը՝ եր, բազմավանկ ներուն ծայրը՝ ներ :

ՀՈԼՈՎ

28. Որի՞, որո՞, որի՞, որով, որ, հարցումներուն պատասխան ըլլալու համար՝ անունին կրած փոփոխութիւններուն կ'ըսվի կողով :

29. Հոլովը հինկ է, և վերի հարցման կարգովը սասնք էն, Բարացական, Տրական, Բացառական, Ղործիական, Հայցական :

30. Հոլովէլի բառը՝ դեռ աս փոփոխութիւնները չը կրած, Ողղական կ'ըսվի . որ և աս պատշառով իսկ հոլով պէտք չ'է սեպվի (1) :

31. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԼՈՎՄԱՆ ՕՐԻՆԱԿ

	Եղակի .	Յոբնակի .
Ողղական	Բառ .	Բառեր .
Բարացական	Բառի .	Բառերո .
Տրական	Բառի .	Բառերո .
Բացառական	Բառի .	Բառերի .
Ղործիական	Բառով .	Բառերով .
Հայցական	Բառ .	Բառեր :

(1) Հայցականը պէտք չ'է ուղղականին հետ շփոթել և անոր պէս հոլով չը սեպել . դերանուններուն ու պարանուններուն մէջ կը տեսնին անոր կրած փոփոխութիւնները :

32. Արանկ կը հորովին ընդ հանրապէս ամէն հորովէլն բառէրը : Սակայն կան քանի մ'ընդունելի արտուղութիւններ, որ վայելչութիան ու կարճութիան համար՝ արձակ ու մանաւանդ չափով գրվածներու մէջ, շատ անգամ կը դործածվին :

33. 1². ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ. — Ի վերջացած բազմավանկ բառերուն ըստացականն ու տրականը՝ երկ ի մէկ տեղ գալով ակրնճի անախորժ չը դարնէլու համար, ին՝ ու կը փոխէն. զոր օրինակ՝ քարի, քարո. հոգի, հոգո. և այլն :

Սակայն ի վերջացած միավանկ բառերուն ըստացականն ու տրականը՝ ուղղականին ին պահէլով, ուն կ'էվէլցնէն. զոր օրինակ՝ յի, յիո. լի, լիո. և այլն :

34. 2². ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ. — ուլիւն կամ ում մասնիկով վերջացած բառերուն ըստացականն ու տրականը՝ ուլիւնը՝ ուլիան, ումը՝ ման կ'ըլլան. և գործիականը՝ ուլիւնը՝ ուլիամբ, ումը՝ մամբ կ'ըլլայ. զոր օրինակ՝ զորուլիւն, զորոլիւան, զորոլիամբ. ուսոմ, ուսման, ուսմամբ : Իսկ ուլիւն ին բացառականը՝ ուլիւն ալ կրնայ ըլլալ. զոր օրինակ՝ զորոլիւն :

35. 3². ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ. — ուլիւն, ում, Խան, նի, լի, յի մասնիկներով վերջացած բառերուն յորնակի ուղղականը՝ մ'էվէլցնէլով կրնայ ըլլալ. և յորնակի ըստացականն ու տրականը՝ ուլիւնը՝ ուլիւանց, ումը՝ մանց. Խանը՝ Խանց, նին՝ նեաց, լին՝ լեաց. և յին՝ յոց ընէլով. զոր օրինակ՝ զորոլիւնի, զորոլիւանց. ուսմանի⁽¹⁾,

(1) ումին յորնակին՝ մանի կ'ըլլայ. ուսոմ, ուսմանի. բաժնոմ, բաժնմանի :

ոստանց . ալիբանք , ալիբանց . հայրենիք , հայրենիաց . արծրոսնիք , արծրոսնիաց . լեւլեք , լեւլաց . կեւկեցիք , կեւկեցոց . և այլն :

Սոյնպէս և հայ բառք՝ հայք , հայոց կրնայ հոլովիլ :

36. 4^ր ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ . — Բառերը՝ հոլոված ատենին , իրենց վերջին վանկին մէջ քաղած ինքնաձայն տառերէն շատ անգամ փոփոխութիւն կը կրէն : Առասիկ ինչպէս .

Ա՝ բաղձավանկ բառերու մէջ՝ երբեմն ը կը փոխվի , որ երբեմն կը գրվի , երբեմն չը գրվի . զոր օրինակ՝ աշխարհ , աշխարհի . ականձ , ալընձի . — բերան , բերնի . զաւակ , զակի :

Ե՝ ի կը փոխվի . զոր օրինակ՝ վեմ , վեմի . օրէն , օրինի :

Ի՝ ը կը փոխվի , որ երբեմն կը գրվի , երբեմն չը գրվի . զոր օրինակ՝ թիւ , թլւի . բժիշկ , բժշկի . — պատիւ , պատուի . օժիտ , օժտի :

Ո՞՞ ը կը փոխվի , որ երբեմն կը գրվի , երբեմն չը գրվի . զոր օրինակ՝ հոսնձ , հընձի . խորհորդ , խորհրդի . — օգոտ , օգտի . գլուխ , գլխի :

Ո՞՞՞ ու կը փոխվի . զոր օրինակ՝ կոյս , կոսի . համբար , համբարի :

Այս և ստանց նման փոփոխութիւններ՝ շատ աւելի , բառերու բարդութիւնն ու կցորդութիւնն մէջ կը գործածվին (1) :

(1) ո՞ տան ալ բաղձավանկ բառերու վերջին վանկին մէջ քիչ տեղ ը կը փոխվի , որ երբեմն կը գրվի , երբեմն չը գրվի . զոր օրինակ՝ ժողով՝ ժողվի . ժողվարդ , ժողվարի . ժողվան , ժողվել . ժողվելի . սովոր՝ սովորի . սովորութիւն . սովորի . սովորի . իսոր՝ իսրել . իսրելի . և այլն :

իւ՝ ձայնն ալ բաղձավանկ բառերու վերջին վանկին մէջ քիչ

37. Պէտք է գիտել, թէ յատուկ անունները սասպիսի հօղովական արտուղի փոփոխութիւններէ ազատ են :

38. Սովորյթն անանկ բերած է, որ իրեր բառ՝ Աստուած, այր, հայր, հետեւեալ արտուղի կերպերովը հօղովին (1) :

1.

Ուլ.	Աստուած .
Բսփ.	Աստուծո .
Տրա .	Աստուծո .
Բայ .	Աստուծոյ .
Գործ .	Աստուծով .
Հայր .	Աստուած :

Ղշմարիտ Աստուծու անունը՝ անյորնակի ասպէս կը հօղովին, սուտ աստուածի հետ չը շփութելու համար, որ իբր հասարակ բառ՝ ընդհանուր հօղովման աակ կ'ընկնի :

2.

	Ելակի .	Յոչնակի .
Ուլ.	ԱՅր .	ԱՅրեր .
Բսփ.	Արոջ .	Արերո .
Տրա .	Արոջ .	Արերո .
Բայ .	Արոջոյ .	Արերի .
Գործ .	Արով .	Արերով .
Հայր .	ԱՅր .	ԱՅրեր :

տեղ է կը փոխին . զոր օրինակ՝ փրկութիւն, փրկութիւնէ, արիւն, արեանակից, աղբիւր, աղբերակ, աղբերահոս, եւ այլն :

(1) Չորս եղանակներուն անունները՝ թէպէտեւ ընդհանուր հօղովման աակ կ'ըննան երթալ, սակայն սովորութիւն է՝ բոտացականին ու արականին՝ Գարոն, Գարնան, աղան, ալնան, ամառ, ամառն, Յիւն, Յիւսն, հօղովել :

Ասանկ կը հօլովլին Տէր (որ է փայր), փերշ, փերշօ, փերշօ. և Աին, կնշ, կնշօ, կնշօ. և ասոնցմէ բարդվածները :

Աեւրայր,	կեւրարշ.
Տանփէր,	փանփերշ.
Տէկին,	փէկնշ.
Տանփէկին,	փանփէկնշ. և այլն :

3.

Ելակի .

Յոնակի .

Ուշ .	շայր .	շայրէր .
Բու .	շօր .	շայրէրու .
Տրա .	շօր .	շայրէրու .
Բաց .	շօրօ .	շայրէրէ .
Գործ .	շայրով .	շայրէրով .
Շայր .	շայր .	շայրէր :

Ասանկ կը հօլովլին Սայր, Տօր . Եղբայր, Եղբօր . և Քոյր, Կօր (¹) . և ասոնցմէ բարդվածները :

Նախահայր,	նախահօր .
Տիրամայր,	փիրամօր .
Շօրեղբայր,	հօրեղբօր .
Սօրեղբօր,	Տօրեղբօր .
Շօրչօր,	հօրչօր կամ հօրչրշ .
Սօրչօր,	Տօրչօր կամ Տօրչրշ . և այլն :

(1) Կօր բառացականը կայ թէ գրաբառին մէջ, և թէ գաւառական բարբառներու մէջ :

ԵՐԿՐՈՐԴ ԳՎՈՒՄ

ՄԱԿԱՆՈՒՆ

39. Սահանուներ բառ ձըն է, որ անունին որպիսու թիւներ կամ որքանու թիւներ կը յայտնէ. զոր օրինակ՝ Ռեծ պուսն, գեղեցիկ Բաղա, Տարբ Տը, Կան Տը Տարբ, Կինկ ոչխար, շաք Ժողովարտ, ամեն աղփ, Բոլոր աշխար: Աս օրինակներուն մէջ՝ Ռեծ, գեղեցիկ, Տը, Կանի Տը, Կինկ, շաք, ամեն, Բոլոր բառերը մա կանունն էն:

40. Սահանուներ գործնական կերպով կը ճանչպի, երբ որպիսի և որքան հարցումներուն պատասխան կըրնայ բլալ, և միանգամայն անկ կամ իր բառերուն հետ կըրնայ դրովել. զոր օրինակ՝ որպիսի տուն, որքան ոչխար. — գեղեցիկ աուն, Կինկ ոչխար. — գեղեցիկ անձ, Կինգ իր: Ահա գեղեցիկ ու Կինկ բառերը մահանունն էն:

41. Սահանունին սահմանէն յայտնի էղաւ, որ մահանունները՝ որպիսական ու որքանական կը բաժնըվին: Աս բառերը բացատրութիան կարօտ չ'են. միայն՝ որքանական մահանուններէն պարզապէս թիւ ու թըւական կարգ ցուցնողները հօս գնէնք:

Սի, կամ Տի.

Սիորտ, կամ ասջին.

Երի, կամ երիո.

Երիորտ, կամ երիորտ.

Ես, կամ իրեք.

Եսորտ, կամ երրորտ.

Քառ, կամ չորս.

Քառորտ, կամ չորրորտ.

Հինկ, կամ Կինգ.

Հինկորտ, կամ Կինգերորտ.

Վեց.

Վեցորտ, կամ Վեցերորտ.

Լօթ .	Լօթորդ , կամ Եօթերորդ .
Ութ .	Ութորդ , կամ ութերորդ .
Ին .	Ինորդ , կամ իներորդ .
Տաս .	Տասորդ , կամ ասներորդ .
ասս_ժի կամ ասս_ժիկ .	ասս_ժիորդ , կամ ասս_ժիերորդ .
ասս_երկ .	ասս_երկորդ , կամ ասս_երկրորդ .
ասս_երես .	ասս_երեսորդ 77
ասս_չաստ .	ասս_չաստորդ 77
ասս_հինկ .	ասս_հինկորդ 77
ասս_վեց .	ասս_վեցորդ 77
ասս_Եօթ .	ասս_Եօթորդ 77
ասս_Ութ .	ասս_Ութորդ 77
ասս_Ին .	ասս_Ինորդ 77
Լըրկտան , կամ չասն .	Լըրկտանորդ , կամ չասներորդ .
երկտան_ժի , կամ երկտան_ժիկ .	երկտան_ժիորդ , կամ երկտան_ժիերորդ .
երկտան_երկ , և այլն .	երկտան_երկորդ , և այլն .
Լոստան .	Լոստանորդ , կամ Եոստաներորդ .
Քաստան .	Քաստանորդ 77
Հինկտան , կամ հիտան .	Հիտանորդ 77
Վեցտան .	Վեցտանորդ 77
Եօթետան .	Եօթետանորդ 77
Ութետան .	Ութետանորդ 77
Ինտան .	Ինտանորդ 77
Հարիւր .	Հարիւրորդ , կամ հարիւրերորդ .
երկ հարիւր կամ երկերկուր (1) .	երկ հարիւրորդ , և այլն ,

(1) Ինչպէս կ'ըսվի արդէն երկերկուր , կը ծնար աւելի պարզ աւելի համառօտաբար ըսվի երկուր , ետուր , չառուր , հինկուր , վեցուր , Եօթուր , Ութուր , Ինուր , Բոստանակ երկ հարիւր , Եո հարիւր , և այլն . և երկերորդ , ետուրորդ , և այլն . Բոստանակ երկ հարիւրորդ , Եո հարիւրորդ , և այլն . սակայն ստորութիւն էլ զած չ'է :

Հալար .	Հալարորդ , կամ հալարերորդ .
Երկ հալար .	Երկ հալարորդ "
Եռ հալար , և այլն .	Եռ հալարորդ , և այլն .
Միլեօն .	Միլեօնորդ , կամ միլեօներորդ .
Երկ միլեօն .	Երկ միլեօնորդ "
Եռ միլեօն , և այլն .	Եռ միլեօնորդ , և այլն .
Երեքմիլեօն .	Երեքմիլեօնորդ , կամ երեքմիլեօներորդ .
Եռմիլեօն .	Եռմիլեօնորդ , կամ եռմիլեօներորդ .
Քառմիլեօն .	Քառմիլեօնորդ , կամ քառմիլեօներորդ .
Հինիլեօն , և այլն .	Հինիլեօնորդ , կամ հինիլեօներորդ , և այլն (1) :

42. Մահանուէր՝ մինակ , սյսինք՝ առանց աւուռնի գործածված ատենը , անուռնին պէս կը հոլովի և անոր պէս թիւ կ'առնէ . զոր օրինակ չարէն հեռացիր , Բարիին մօտեցիր .
 Դոլինէրէն խորշէ՛ , առաջինինէրուան հետեւէ՛ :

(1) Միաձեւութիան , կանոնաւորութիան , համաօտութիան ու պարզութիան համար աս թիւական բառերուն պարզ արմատները և անոնցմով կցորդվածները հոս ցուցինք :

Յօդ-գիծը՝ բազադրեալ թիւերուն մէջ և կամ ու բառկապներուն տեղը կը բռնէ . և ան ատեն միայն կը գործածվի , երբ մեծ թիւն առաջ ըլլայ . զորօրինակ՝ եռսուն և վեց կամ եռսուն ու վեցի տեղ՝ կը գրվի եռսուն-վեց , յօդ-գիծով : Իսկ երբ պզտի թիւն առաջ ըլլայ , ոչ բառկապ կը մտնի , հետեւաբար և ոչ յօդ-գիծ , զորօրինակ՝ 5000 թիւը՝ հինի-հալար չի գրվի , վասն զի ասի 5 և 1000 նշանակելով 1005 կ'իմացնէ . մինչդեռ մենք կ'ուզենք խնայնել 5060 = հինի հալար . հոս հինիը՝ հաղարին վայ իբր որքանական մահանուն գրված :

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԴԵՐԱՆՈՒՆ

43. Դերանունը բառ մըն է, որ անունին տեղը կը բռնէ :

44. Հինկ տեսակ դերանուն կայ . Դիմական, Յոյսական, Բարեբերական, Լ'նորոշ :

45. Դիմական կ'ըսվին ան դերանունները, որ մասնաւորապէս շէ՛մ որոշէլու համար կը գործածվին :

46. Դի՛մ կ'ըսվին՝ խօսակցութիան մէջ պաշտօն մը կատարող անձերը, որոնք իրեք էն : Լ'ս իրեք դէմերէն առջինն ան է որ կը խօսի . երկրորդն ան՝ որու կը խօսվի . և երրորդն ան՝ որի համար կը խօսվի :

47. Լ'ս եռ դէմերը՝ ես, դու (1), ինչ կամ նա բառերով կը բացատրվին եզակիին մէջ, և Ֆինչ, դուստր, իրե՛նչ կամ նաո՛նչ բառերով՝ յոքնակիին մէջ : Լ'հա ասոնք էն դիմական դերանունները :

48. ԳԻՏԵԼԻԻՔ . — Ինչ դերանունն ամէն դէմի հետ կը գրվի սաստիկութիւն տալու համար, և իւրաքանձիւր դէմին առ նոյն ինք ունէցած վերաբերութիւնը կ'իմացնէ . և ասոր համար անորադուստր կ'ըսվի . զոր օրինակ՝ ես ինչ հրամայի . դուստր ինչ գրէցիր . նա ինչ վճարէց :

(1) Դուսէն ետեւ եկած բառը՝ ինքնաձայնով մանաւանդ ուսով ըստի նէ, ներգաշնակութիան համար դուսն կը գրվի . զոր օրինակ՝ դուսն ըսիր . դուսն ո՛վ էս . դուսն ուղեցիր . և այլն :

49. Յուցական կ'ըսվին ան դերանունները՝ որ իւրաքանձիւր դէմին մօտ էզլած անունը կը ցուցնէն . և սանք էն . սա , դա , նա . սա , սպ , ան . սոյն , զոյն , նոյն . սաի , սպի , անի (1) :

50. Սա , սա , սոյն , սաի՝ առջին դէմին ցուցած կամ անոր մօտ էզլած բանը կ'իմացնէն . դա , սպ , զոյն , սպի՝ երկրորդ դէմինը . նա , ան , նոյն , անի՝ երրորդ դէմինը :

51. Աս , սպ , ան՝ արդէն յիշված բանը կը ցուցնէն . սա , դա , նա՝ դեռ յիշվելի բանը կը ցուցնէն :

52. Աի , սպի , անի ցուցականները՝ միշտ բայի հետ կը վարվին . զոր օրինակ՝ սաի յաղլից . սպի յաղլիցս . անի գախս : Իսկ միւս ցուցականները՝ բայի հետ ալ կը վարվին , անունի հետ ալ : Արբ բայի հետ վարվին , դերանուն էն . իսկ երբ աւ նունի վրայ դրվին , մականունի պաշտօն կը վարէն . զոր օրինակ՝ սա ըսաս , դա մարի ըրաս , նա գըրից . սա լընցաս , սպ ըսիցից , ան դարբիցաս . — սա գիրից , դա գրից , նա մարդը . սա գիրից , սպ գրիլը , ան մարդը :

53. Մտացական կ'ըսվին ան դերանունները , որ իւրաքանձիւր դէմի հետ ըստացական յարբերութիւն ունօղ անունին տեղը կը բռնէն . և սանք էն . իմն , ոյն , իւրին կամ իրեն՝ եղակի դերանուններէ շինված . իւրին , յերին , իրենց՝ յարնակի դերանուններէ շինված :

54. Մտացական դերանունները միշտ բայի

(1) Աս ցուցականները՝ որ բառի հետ բարգվին նե , ան բառին հետ ալ նոյն դիմական կարգը ցուցնելու ուժը կը պահէն . ինչպէս , սախն : սպլախ , սառլիս , նառլիս : սոյնալիս , նոյնալիս . և այլն :

հետ կը վարվին . և որ դէմէ էն նէ , նոյն դէմին արմատ գիրը՝ եղակիէ շինվածնէրուն ծայրը կը կրկնրվի . իսկ յարնակիէ շինվածնէրուն ամէնին ալ ծայրը՝ միայն երրորդ դէմին արմատ գիրը կը դրվի . զոր օրինակ՝ աւ իմինս է . արինը հոս չէ . իրենն ո՞ր է . — Բերինն աւարպէցաւ . Յերինն ըսկէց . իրենն յը չէ յաջողէցաւ :

55 . Յարբերական կ'ըսվի ան միակ որ դերանունն էր , որ անմիջական կապակցութիամբ մէջ կը բերէ ո՛ր և է դէմէ եղող անունն մը կամ դերանունն մը : Օր . ես որ խօսէցայ . դո՞ւն որ մտիկ ըսիր . նա որ դրէց : Սերն է որ ըզ մարդ Մտուծու հետ կը միաւորէ : Օրինակնէրուն մէջ գտված որը՝ ես , դո՞ւ , նա և սէր բառերը կը յարբերէ :

56 . Անորոշ կ'ըսվին ան դերանունները , որ մասնաւոր դէմ՝ մը չ'որոշելով , և ամէն դէմի յարմարիլով կը յիշէցնէն ան անունն որի տեղը բռնած էն . և սասնք էն . ո՛վ , ո՛ր , ի՛նչ , անձիւր , իւրաքանչիւր , իրար :

57 . Աս անորոշ դերանուններէն կան որ աւնունի հետ ալ կրնան դրվիլ . և անատեն մակաւնունի պաշտօն կը վարէն . զոր օրինակ՝ ո՛ր աղգասէր , ի՛նչ կարծիք , անձիւր մարդ , իւրաքանչիւր լեզու :

58 . 'Իերանուններուն « , դ , ն , արմատ գիրէրը՝ 'Իմորիչ յօր կ'ըսվին . և բառերու ծայրը դրվիլով՝ դերանունները կը յիշէցնէն . զոր օրինակ՝ ես թագւորս , ատ խօսքդ , իմ երկիրս , նաոր ծառան :

59 . ԳԻՏԵԼԻՔ . — Ի աղաձայնով վերջացած բառերուն ծայրը՝ ն գիմորիչը ը կը փոխվի . զոր օրինակ՝ սէրն , գրուին ըսէրու տեղ՝ կ'ըսվի սէրը ,

գլուխը : Իսկ երբ անմիջապէս եկող բառն ինքնաձայնով ըսկսի , ը գիրը վերստին ն կը փոխվի . ինչպէս , սէրն է պատուիրաններուն գլուխը , կ'ըսվի , և ոչ թէ սէրը է :

60 . Կիմորիչ յօդէրը՝ իրենց դերանունները խօսքին մէջ ներկայ չ'ըլլալով , բառերուն ծայրը յարած ըլլան նէ , սովորաբար ըստացական դերանունի իմաստ կու տան :

1՛ . Իֆին , չոյին , իւրին՝ եզակիէ շինված ըստացականները ցուցած ատեննին , սոսկ կը յարին բառերուն ծայրը . զոր օրինակ՝ ձիա , ձիդ , ձին՝ ըսել է իմ ձիա , քու ձիդ , իր ձին . ձիերա , ձիերդ , ձիերը՝ ըսել է իմ ձիերս , քու ձիերդ , իր ձիերը . պատկերա , պատկերդ , պատկերը՝ ըսել է իմ պատկերս , քու պատկերդ , իր պատկերը . պատկերներա , պատկերներդ , պատկերները՝ ըսել է իմ պատկերներս , քու պատկերներդ , անոր պատկերները :

2՛ . Սերին , յերին , իրենց՝ յոքնակիէ շինված ըստացականները ցուցած ատեննին , նի մասնիկով կը յարին բառերուն ծայրը . զոր օրինակ՝ ձինի , ձինիդ , ձինին՝ ըսել է մեր ձին , ձեր ձին , իրենց ձին . ձիերնի , ձիերնիդ , ձիերնին՝ ըսել է մեր ձիերը , ձեր ձիերը , իրենց ձիերը . պատկերնի , պատկերնիդ , պատկերնին՝ ըսել է մեր պատկերը , ձեր պատկերը , իրենց պատկերը . պատկերներնի , պատկերներնիդ , պատկերներնին՝ ըսել է մեր պատկերները , ձեր պատկերները , իրենց պատկերները :

61. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ

ԱՌՋԻՆ ԴԵՄ

	Ելակի .	Յոճակի .
Ուշ .	Ես .	Սենք .
Բար .	Իմ .	Սեր .
Տրա .	Ինձի .	Սեզի .
Բայ .	Ինէ .	Սենէ .
Գործ .	Ինով .	Սենով .
Հայր .	Իս .	Սեզ :

ԵՐԿՐՈՐԴ ԴԵՄ

	Ելակի .	Յոճակի .
Ուշ .	Դու .	Դուք .
Բար .	Քու .	Չեր . ,
Տրա .	Քեզի .	Չեզի .
Բայ .	Քենէ .	Չենէ .
Գործ .	Քենով .	Չենով .
Հայր .	Քեզ .	Չեզ :

ԵՐՐՈՐԴ ԴԵՄ

	Ելակի .	Յոճակի .
Ուշ .	Ինք .	Իրենք .
Բար .	Իր .	Իրենց .
Տրա .	Իրեն .	Իրենց .
Բայ .	Իրմէ .	Իրենցմէ .
Գործ .	Իրմով .	Իրենցմով .
Հայր .	Ինք .	Իրենք :

	Նշանի .	Յոճնակի .
Ուղ .	Նա .	Նաոնք .
Բաբ .	Նար .	Նաոնց .
Տրա .	Նար .	Նաոնց .
Բայ .	Նակէ .	Նաոնցմէ .
Չորթ .	Նաով .	Նաոնցմով .
Հայց .	Նա .	Նաոնք :

Ասանկ կը հորովվին աա , րա . աա , աբ , ան .
 աւի , աբի , ահի դերանուուններն ալ : Ապքի իրեքը
 է գիրը կարուսէլով , պարզապէս աա , աբ , ան դե-
 րանուուններուն պէս կը հորովվին , և կ'ըլլան ա-
 սոր , ասիէ , ասով , և այլն :

	Նշանի .	Յոճնակի .
Ուղ .	Որ .	Որոնք .
Բաբ .	Որի .	Որոնց .
Տրա .	Որո .	Որոնց .
Բայ .	Որմէ .	Որոնցմէ .
Չորթ .	Որով .	Որոնցմով .
Հայց .	Որ .	Որոնք :

62 . Ով անորոշ դերանուունն ալ՝ հորովման մէջ
 զն ըի փոխէլով , որին պէս կը հորովվի : Իրոր ա-
 նորոշն ալ որ ին եզակիին պէս կը հորովվի . ձե-
 ւով յոքնակի չ'ունէ , բայց իմաստով յոքնակի է :
 Սնացած դերանուուններն ալ ընդհանուր հո-
 րովման տակ կ'երթան :

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՊԱՐԱՆՈՒՆ

63 . Պարանունը՝ ընդհանրապէս ինքնին ան նըշան մասնիկ մըն է , որ խօսքի մէջ մինակ չը վարվի . այլ հօլովէլն բառերուն ըսկիպը դրվելով և կամ վերջը կցվելով՝ նշանակութիան ուժ կ'ըստանայ , որով բառին պարզ նշանակութիւնը կ'այլայլէ , և անոր պէսպէս պարագանէրը կը յայտնէ :

64 . Երկու տեսակ պարանուն կայ . նախ՝ աւ նոնք որ բառին ընդէջը իւր լինի , և կը կոչվին նախորդ կամ նախորդ . երկրորդ՝ անոնք որ բառին վերջը իւր լինի , և կը կոչվին իջորդ կամ յետին :

1 . ՆԱԽԴԻՐ ՊԱՐԱՆՈՒՆ

65 . Նախդիրնէրը սաննք էն . ի , առ , ըլ , ընդ , ըստ , չան , քայ , անց , իբր , ինչ , զէր , զէս :

Ի , ԱՌ

Նախորդաւոր պրական կը շինէն . ինչպէս , ի պոռն , առ Ապոռած : Իսկ ի նախդիրը՝ ինքնաձայնով ըսկը սած բառի հետ դրվելու ըլլայ նէ , յ կը փոխվի . ինչպէս յ'իս , յ'ալարի , յ'Արիի :

ԸԶ

Նախորդաւոր հայցական կը շինէ . և ինքնաձայնէ

առաջ ըն կը կորուսէ . զոր օրինակ՝ ըլ Բառ , ըլ
լէդոս , 'ըլ'սպոսած , 'ըօգոսս :

ԸՆԻ

Ինչ ամէնը հարիւր կանգուն . — ամէնը մէ-
կէն՝ ըսէլ է : Ինչ այր և ընչ կին քառսուն հո-
գի . — այր ու կին մէկ տեղ առնելով՝ ըսէլ է :
Ինչ խաղ , ընչ կատակ , ընչ ձեւ . — խաղի հա-
մար , կատակի համար , ձեւի համար՝ ըսէլ է :
Ինչ շնորհ տալ . — սլարգեւի տեղ տալ՝ ըսէլ է :
Ինչ երես խօսիլ . — աչառու թիամբ խօսիլ՝ ըսէլ է :

ԸՍՏ

Իսպ գլուխ , ըսպ տուն հարիւր բոլոր . — մարդ
գլուխ , տուն գլուխ՝ ըսէլ է : Իսպ քրիստոնէ
վարվիլ . — քրիստոնէի պէս վարվիլ՝ ըսէլ է :
Իսպ իմ համոզմանս , ըսպ քու կամքիդ . — իմ հա-
մոզմանսնայելով , քու կամքիդ համեմատ՝ ըսէլ է :
Իսպ կարի , ըսպ բաւականին . — կարողութիանը
չափ , օգտելու չափ՝ ըսէլ է : () ր ըսպ օրէ , սամ
ըսպ ամէ . — օրէ օր , տարիէ տարի , կամ օր օրի
վրայ , ետեւ՝ ըսէլ է :

ԲԱՆ

Գիտութիւնը չան 'ըսակին պատուական է . —
ոսկիէն աւելի պատուական՝ ըսէլ է : Միրով կը
յաղթվի չան բռնութիամբ . — բռնութիւնէն ա-
ւելի սիրով կը յաղթվի՝ ըսէլ է :

ԲԱՅ

Ամէն բան կորաւ Բայ պատիւը . — պատիւէն
զատ՝ ըսէլ է : Բայ սէրը ամէն բան կը յաղթվի .
— սէրէն զատ՝ ըսէլ է :

ԱՆՑ

Անց հրաման չ'երթալ . — առանց հրամանի՝ ը-
սէլ է : Անց գործ հաւատը մեռած է . — առանց
գործի՝ ըսէլ է :

ԻԲԻ

Իբր հայր պատուէլ . — հօր պէս պատուել՝ ըսէլ է :
Իբր դեսպան զրկէլ . — դեսպանի պէս զրկել՝ ըսէլ է :

ՄԻՆՁ

Մինչ Ամերիկ գնացին : Գեանէն Ֆինլերկինք :

ԶԻՐԴ

Օ կրտ քահանայ , շէրտ թագւոր . — քահանայի
պէս , թագւորի պէս՝ ըսէլ է : Օ կրտ սուգի մէջ
կու լային . — սուգի մէջ էղածի պէս՝ ըսէլ է :

ԴԵՊ

Դեպ Երուսաղէմ գնացին : Դեպ ի տաճարը
վազէցին :

2. ԿՑՈՐԴ ՊԱՐԱՆՈՒՆ

66. Կցորդները բազմաթիւ են , և բազմօրի-
նակ փոփոխութիւններ կը բերէն բառին նշանա-

կութիանը . գլխաւորները միայն հոս յիշէնք . և նախ՝ սա հինկ մասնիկներուն վրայ խօսինք , ա՛ն , շ , փ , փ , փ . որ բառին ըսկիզբը կը կցվին , որ նախորդ էն միանգամայն և կցորդ , այսինք՝ նախակցորդ =

67 . 1^ն , չ՝ ժխտական մասնիկներ էն . և բառին նշանակութիան ներհակ իմաստը կու տան . ինչպէս , անէղ , անխոհեմ , անապակ . չէ , չինչ , չասուած , և այլն : Իսկ փ , փ , փ . եղծական էն . բառին նշանակութիան եղծվածը կ'իմացնէն . այսինք՝ կամ ան է որ բանի մը դեռ ի կատարելութիւն հասած չ'ըլլալը կը ցուցնէն , և կամ կատարելութիւնը կորուսած ըլլալը . զորօրինակ՝ անգեղ՝ ան որ գեղ չ'ունէ և չ'է ունած . իսկ փգեղ՝ ան որ դեռ ի գեղեցկութիւն չ'է հասած , կամ գեղն եղծված կորած է : Սոյնպէս էն անգէտ , փգէտ . անկար , փկար . անհաս , փհաս . անքուն , փքուն . անձեւ , փձեւ . անգոհ , փգոհ . աներջանիկ , փերջանիկ :

68 . 1^ն . ԴԻՏՕՂՈՒԹԻՒՆ . — պ , բ , տառերէն առաջ՝ ան մասնիկը երբեմն ա՛մ կը փոխվի . զորօրինակ՝ անպարիշտ , ա՛մպարիշտ . անբիծ , ա՛մբիծ . և այլն :

69 . 2^դ . ԴԻՏՕՂՈՒԹԻՒՆ . — ան մասնիկը երբեմն ն գիրը կը թողէ , և մինակ ա կը բանի ան ի տեղ . զորօրինակ ահամայ՝ իբր անկամայ . ա՛ծուխ՝ իբր անծուխ . և այլն :

70 . ՀԱՅՐԵՆԱԿԱՆ կցորդներ , որ հայրենիք , ազգ , լեզու , կրօն կը յայտնէն :

յի՛ . — պօլսէյի՛ , կիլիկէյի՛ , կիպրացի՛ , ֆռանսացի՛ :
Էան . — արամէան , արարատէան , հայկազէան :

ունի . — արշակունի , բազրասառունի , արծրունի , ռըշ-
տունի :

րէնի . — հայերէն , ֆռանկերէն , արպերէն :

կան . — ընդհանրական , առաքելական , աւետարա-
նական :

71 . ՌՒՆԱՅԱՆ կցորդներ , որ կցված բառին ու-
նօղը , պարունակօղը , տեղը , կամ անկէ շինված
ըլլալը կամ անոր հետ վերբերութիւն յարմա-
րութիւն մ'ունէլը կը յայտնէն :

ոն . — քայլոն , թռչոն , սաղոն , լաղոն :

որ . — զինոր , թագոր , հոգեոր , մարմնաոր :

է . — քարէ , փայտէ , արծրթէ , սակիէ :

էղէն . — հրէղէն , հողէղէն , լուսէղէն , ջրէղէն (1) :

ի , էնի . — ինծորի , ծիրանի , վարդէնի , նըռնէնի :

ին , ային . — խորին , մթին , հրեշտակային , մարգ-
կային :

ոց կամ նոց . — դսրոց , նատոց , թիկնոց , հիւրանոց :

բան . — վարժարան , ճեմարան , դասարան , վառարան :

սպան . — հայասպան , ֆռանկսպան , թուրքասպան :

լի . — սիրէլի , զարմանալի , պատուէլի , ընդունէլի :

ոցո . — ախրոցո , հարսնոցո , մահացո , ապակա-
նացո :

ան . — վարձկան , աշխարհական , բնական , արհես-
տական :

72 . ԳՈՐԾԱԿԱՆ կցորդներ , որ ընօղը , գործին ,
արհեստն ու վարձը կը նշանակէն :

ի . — գործի , աղօրի , բանալի , ունէլի , հայլի :

իչ . — արարիչ , փրկիչ , սրբիչ , գրիչ :

(1) Բուն մասնիկը էն է . և եղ բառը՝ երկու բային արմատն է .
բայց որովհետեւ էնը մինակ չէ կցվի բառին ծայրը , այլ միշտ եռ
բառով , ապա պատճառով երկը մէկ միացած ցուցինք մասնիկ-
ներուն կարգը՝ զիւրութիան համար :

ակ , նակ . — խնդրակ , նըւիրակ , խօսնակ , կոչնակ :

ան . — խթան , փական , իշխան , ճարտասան :

ոյ . — սղոյ , խարտոյ , հօտոյ , կթոյ :

որդ . — որարդ , սայլրդ , անցորդ , ճամպորդ :

պան . — պարտիզպան , սյգէպան , վանապան , դռնապան :

լէ . — բանօղլէ , կրօղլէ , տեսօղլէ , աւետլէ :

73 . ՍԱՍՏԿԱԿԱՆ կցորդներ , որ կ'էվէլցնէն , կ'աւ
ռատցնէն պարզին նշանակութիւնը :

ապ . — խորխորապ , հեղեղապ , հատտապ :

ոպ . — վավաչոպ , նախընծոպ , կասկածոպ , երկչոպ :

ոպ . — տղմոպ , աւաղոպ , մացառոպ :

եպ . — շահաեպ , երանաեպ , մարդաեպ :

գին . — զըւարթագին , ահագին , զայրագին , ցաւագին

գոյն . — մեծագոյն , փոքրագոյն , լաւագոյն , գերագոյն :

74 . ՆՐԱՆԶԱԿԱՆ կցորդներ , որ կը նըւազէն ,
փաղաքէլով կը պղտիկցնէն պարզին նշանակու
թիւնը :

ակ . — նաւակ , ձորակ , լուսնակ , սրդիակ :

եկ . — որդեկ , աղեկ , պատանեկ :

իկ . — մանկիկ , հայրիկ , մայրիկ , այրիկ , կնիկ :

ոակ . — մէնոակ , միայնոակ , խեղճոակ , սղորմոակ :

յա . — մարիյա , լուսիյա . — ասմասնիկն իդական է ,
ինչպէս ոակի և անոյլ կամ ոյլ մասնիկները , որ սոսկ
իդական էն առանց նըւազական նշանակութիան .
ինչպէս , տիրոակի , արմէնոակի , Ֆռանկոակի , անկ
լոակի , խոսրովանոյլ , վարդանոյլ կամ վարդոյլ :

75 . ՎԵՐԱՑԱԿԱՆ կցորդներ , որ բայարմատ
բառերու կցվիլով , վերացեալ նշանակութիւն
կու տան բառին :

ած . — արարած , կատարած , կոտորած :

անք . — պարծանք , զարմանք , մազթանք :

- ի* . — չարի*, կեղծի*, կարծի*, թըւի* :
 ի-ն . — հընչի-ն, գոչի-ն, շչընչի-ն, լալի-ն :
 ոյլ . — այցելոյլ, սովրոյլ, ձանձրոյլ . — ի-ն մասնի-
 կով կրկնակից՝ այցելու-ի-ն . սովրու-ի-ն,
 ձանձրու-ի-ն :
 ուժ . — կոչո՜ւժ, ոււսո՜ւժ, հընչո՜ւժ, հալածո՜ւժ (1) :
 ունդ . — ծնո՜ւնդ, սնո՜ւնդ, սերո՜ւնդ :
 ուսս . — գալու՜սս . փախո՜սս, կորո՜սս :
 ուրդ . — խառնո՜ւրդ, խորհո՜ւրդ, ժողովո՜ւրդ :
 էլ, իլ, ալ . — կցված բառը կը բայացնէն . ինչ-
 պէս, գործէլ, խօսիլ, երթալ :

- 76 . ՆՈՅՆԱԿԱՆ կցորդներ, որ գրեթէ անփո-
 փօս կը պահէն պարզին նշանակութիւնը :
 աի . — է, էաի . օրէն, օրինաի . կայծ, կայծաի :
 ան . — նիշ, նշան . հրամ, հրաման . պաաւէր,
 պատուիրան :
 եսս . — պահ, պահեսս . գով, գովեսս :
 իլ . — տես, տեսիլ . կաթ, կաթիլ :
 նի . — յայտ, յայտնի . գաղտ, գաղտնի :
 ուի . — գով, գովուի . տաք, տաքուի . արեւ, ա-
 րեւուի :

77 . Ի՛նչն պարանուններէն զատ՝ կան շատ
 մը հոլովաւորու ըսված նշանական բառեր ալ, ո-
 րոնք հոլովված բառի մը հետ դրվիլով՝ նոյն բա-
 ռին այլ և այլ միտքեր կու տան . և սասնկով գը-
 րեթէ պարանունի պաշտօն կը վարէն : Ասոնցմէ
 շատ բանուկները՝ առած հոլովներուն օրինակնե-
 րովը դնէ՛նք հոս :

(1) ուժ և ուի-ն մասնիկները՝ ներդարութիւն կամ կիրք
 յայտնօղ ամէն արմատներու հետ կը կցվին . ինչպէս, օժո՜ւժ, օ-
 ժո-ի-ն : Բայց ուի-նը՝ բայարմատ չ'էզօղ անուններու ալ կը
 կցվի վերացեալ մտքով . իսկ ուժը՝ ո՛չ . զորօրինակ՝ աստուածուի-ն,
 ճարդուի-ն, այլ ո՛չ աստուածո՜ւժ, ճարդո՜ւժ :

3. ՀՈՒՈՎԱՌՈՒ ԲԱՌԷՐ

Համար . — իմ , քու , մեր , ձեր համար , ճշմարտութիան համար :

ընդամի . — արգարու թիան , ազատութիան ընդամի :

ընդդէմ . — անիրաւութիան , բռնութիան ընդդէմ :

պէս . — ինծի , քեզի պէս . արեւի , լուսնի պէս :

չափ . — ինծի , քեզի չափ . ծովի , լեռի չափ :

հեփ . — իմ , քու , մեր , ձեր հեփ . աշկերտին հեփ :

ղափ . — ասկէ , ատկէ զափ . գրվածնէրէն զափ :

առաջ . — ջրհեղեղէն առաջ , բաժանութեն առաջ :

եփ . — Քրիստոսէ եփ , կործանութեն եփ :

առջեւ . — տաճարին առջեւ , ատենապետին առջեւ :

եփեւ . — խորանին եփեւ , վարագուրին եփեւ :

վեր . — սանդուղէն վեր , լեռէն վեր :

վար . — սանդուղէն վար , լեռէն վար :

վերեւ . — տունին վերեւ , դաշտին վերեւ :

վարեւ . — բլուրին վարեւ , գիւղին վարեւ :

վրայ . — սեղանին վրայ , աթոռին վրայ :

փակ . — սեղանին փակ . աթոռին փակ :

ներս . — դուռէն ներս , սրահէն ներս :

դուռ . — դուռէն դուռ , սրահէն դուռ :

ներսեւ . — կաղնիին ներսեւ , գետնին ներսեւ :

դրսեւ . — վրանին դրսեւ , գետնին դրսեւ :

ձեջ . — սնտուկին ձեջ , բնկողնին ձեջ :

հոյ . — վարպետին հոյ , խորհրդականին հոյ :

ընթաց . — կրակին ընթաց , վառարանին ընթաց :

ընթաց . — սեղանին ընթաց , հնոցին ընթաց :

դէմ . — քաղքին դէմ , պալատին դէմ :

ճօփ . — գիւղին ճօփ , աղբիւրին ճօփ :

հեռի . — գետէն հեռի , ծովէն հեռի :

78. Ի՛յար՝ խօսքի մէջ հաստատութիւն ցուցնող բառն է. այսինք՝ առարկայի մը այս ինչ կամ այն ինչ որպիսութիամբ ըլլալը հաստատող բառը :

Երբ ըսէնք՝ « օգը տաք է » կը հաստատենք թէ փայ մականունով յայտնուած որպիսութիւնն օգին կը վերբերի : Եւ աս հաստատութիւնը ցուցնողը է բառն է, զոր Բայ կը կոչենք :

79. Եթէ ճիշտ նայիլի, բուն բայը մէկ հատ է, որ է ել բառը. վասն զի հաստատութիւն ցուցնող մինակ աս է. և գործել, գրել, սիրել և այլն, բառերուն բայ կ'ըսենք նէ, անոր համար է որ ել բայն իրենց մէջ կը պարունակեն. գործել՝ գործողել ըսել է, գործէցի՝ գործողեցի, գործէի՝ գործողի, գործեմ՝ գործողեմ. սոյնպէս և միւս ամէնը :

Եւ ել բառը՝ Եական Բայ կ'ըսիլ :

80. Իսկ շատ անգամ, աս էական բայը՝ որ հաստատութիւն միայն կ'իմացնէ, գործողութիւն կամ որպիսութիւն նշանակող բառերու հետ՝ իրով կամ իմաստով կը միանայ (1). և ան

(1) Գործել բային մէջ եւր իրով կը գտիլ, նոյնպէս էլ յանգած բայերն ալ կրնան եւր իրով բնորոշած սեպիլ, է գիրը՝ էի փոխած ըլլալով. ինչպէս. խօսիլ խօսող եւ, նստիլ նստող եւ, և այլն : Սակայն ալ յանգած բայերուն մէջ՝ եւր իմաստով միայն կը գտիլ. երթալ՝ երթող եւ, խնայալ՝ խնայող եւ, և այլն :

ատեն առաջ կու գան տեսակ մը բայեր, որ հաստատութիան հետ գործողութիւն ալ կ'իմացընեն: Աս տեսակ բայերը՝ էական բայէն սրոշվելու համար, մտրտաոր բայ կ'ըսվին:

81. Սակզբաւոր բայերն իրեք տեսակ էն. ներգործական, կրատական, չեղոյ:


82. Ներգործականը՝ գործողութիւնն ուրիշի մը վրայ կը կատարէ. ինչպէս, գործել, սիրել, ծեծել:

83. Կրատորականը՝ գործողութիւնն ուրիշէ մը իր վրայ կ'ընդունէ. ինչպէս, գործվել, սիրվել, ծեծվել:

84. Չեղորը՝ գործողութիւնն ո՛չ ուրիշի մը վրայ կը կատարէ, և ո՛չ ուրիշէ մը իր վրայ կ'ընդունէ. հասցա գործողութիւնն իր վրայ կը մընայ. ինչպէս, երևալ, խոսալ:

85. Բայի մը ներգործական կամ կրատորական ըլլալը նիւթապէս ճանչելու համար, նայելու է թէ կարելի է նոյն բային հետ զնե անց ճը կամ իր ճը, և կամ անց ճը կամ իրէ ճը բառերը: Առջին դիպաւածին մէջ՝ բային ներգործական ըլլալը կը ճանչվի. երկրորդին մէջ՝ կրատորական ըլլալը:

Սերի օրինակներն առնենք. գործել, սիրել, ծեծել՝ ներգործական բայեր էն. որովհետեւ հընար է ըսել՝ գործել իր ճը (երկիր), սիրել անց ճը, ծեծել անց ճը: Եւ սիրվել, ծեծվել՝ կրատորական բայեր էն. վասն զի հնար է ըսել՝ սիրվել անց ճը, ծեծվել մէկէ ճը: Իսկ երբ չի կրնանք բային հետ զնե աւ բառերէն մէկը, նշան է որ ան բայը չեղոր է: Երևալ, խոսիլ, անց ճը կամ իր ճը, կամ



Երբեք, նախքան անչե՛ մը կամ իրե՛ մը հնար չ'է ըսել . ուստի երբեք ու նախքան չէզոք բայեր էն :

86 . Բայերն ընդհանրապէս իրենց յանգէն ալ յայտնի կրնան սեպղիլ, ինչպէս կրաւորականն իր էվէլորդ վ գիրէն . իսկ միւսները՝ բայ մէկ քանին , իրենց սեփական յանգերէն , 'զոր խոնարհման մէջ տեսնելու էնք :

87 . ԳԻՏԵԼԻԹ . — Անյոյակն ըսված տեսակ մը ներգործական բայեր ալ կան , որոնց մէջ՝ երկու տեսակ գործողութիւն իրարի մէջ անցած էն . ինչպէս , վախցնել , խոտցել՝ անանկ ընել կամ պատճառ ըլլալ որ ուրիշ մը վախնայ կամ թրուչի՛ ըսել է : Ա՛յ մը՝ պատճառ էզողին գործողութիւնը կայ , մէյ մ'ալ՝ վախցողին կամ թրուչողին գործողութիւնը : Այս երկու գործողութիւնն ալ՝ վախցնել կամ խոտցել բայերուն մէջ պարունակված էն :

88 . Խօսքի մէջ՝ գործողութիւնն տէրը , այս ինք՝ կատարողը դէմով կը յայտնուի . և սա դէմն ալ կրնայ եզակի կամ յոքնակի թիւէն ըլլալ (46 , 47) . ասոր համար՝ բայն ալ ԴԷ՛ ու ԲԻ՛ ունէ :

89 . Բային դէմն ու թիւը՝ մասնաւորապէս դիմական գերանուններով կը բացատրվին . ինչպէս , Էս գործէցի , Դո՛ գործէցիր , Ինչ գործէց . Տե՛ն գործէցինք , Դո՛ն գործէցէք , Իրե՛ն գործէցին : Այս գերանունները բային հետ դրված չը գտվին նէ ալ , զօրութիամբ կ'իմացվին :

90 . Ո՛ և է հաստատութիւն կամ գործողութիւն՝ եղանակով մը և ժամանակի մը մէջ կը կատարվի . ուստի բայն եղանակ ու ժամանակ ունէ :

91 . Լիզանեակն երկու է . պարմական , հրամական :

92 . Պատմականը՝ գործօղու թիւնը սոսկ պատմելով կ'իմացնէ . ինչպէս , գործեցի , իւր գործեի , իւր գործեմ , գործելու եմ :

93 . Հրամականը՝ գործօղու թիւնն ընել կամ չ'ընել կը հրամէ . ինչպէս , գործէ , մի գործել :

94 . Ժամանակն իրեք է , անցեալ , ներիայ , ապառնի (1) :

95 . Լիցեալը՝ անցած ժամանակի մէջ էղած կը յայանէ գործօղու թիւնը . որ եթէ լմնցած է՝ խոսարեալ անցեալ կ'ըսվի . ինչպէս , գործեցի . եթէ չ'է լմնցած՝ անխոսար անցեալ կ'ըսվի . ինչպէս , իւր գործեի :

96 . Ներկան՝ գործօղու թիւն կատարված ժամանակն է . ինչպէս , իւր գործեմ :

97 . Լպառնին՝ գործօղու թիւն գալու ժամանակի մէջ կատարվելիքը կը ցուցնէ . ինչպէս , գործելու եմ :

ԴԵՐԲԱՅ

98 . Ի ուն բայերէն զատ՝ կան նաեւ Դերբայ ըսված գործօղու թիւն նշանակող բառեր , որոնք բայէ կը ծագին , և բայի տեղ կը դրվին առանց որոշ եղանակ ու դէմ յայտնելու , այլ ամէն եղանակի ու դէմի յարմարիլով : Աս բառերը միանգամայն անունի ու մականունի ուժ ունեն . և ասոր համար Բայանուն ալ կը կոչվին . ինչպէս երբ ըսվի՝ գործող մարդ , գործված երկիր , գործելու հող , գործելը բարի է :

(1) Անցեալն՝ առաջ , ներկան՝ ետքը , ապառնին՝ վերջը . աս է ժամանակին բնական կարգը , զոր խոնարհումներուն մէջ ալ կը պահենք :

99. Չորս տեսակ դերբայ կայ . անցեալ, ներկայ, ապառնի, անորիշ :

100. Անցեալ դերբայը՝ ած կը յանգի, և որ ժամանակի հետ գալի նէ, նոյն ժամանակին մէջ անցած գործօղութիւն մը կը յայտնէ . ինչպէս, գործած էզայ, գործած էմ, գործած ըլլալու էմ :

101. Ներկայ դերբայը՝ օղ կը յանգի, և որ ժամանակի հետ գալի նէ, նոյն ժամանակին մէջ ներկայ էզօղ գործօղութիւն մը կը յայտնէ . ինչպէս, գործօղ էզայ, գործօղ էմ, գործօղ ըլլալու էմ :

102. Ապառնի դերբայը՝ լը կը յանգի, և առ մէն ժամանակի մէջ՝ ըլլալու գործօղութիւն մը կը յայտնէ, ինչպէս, գործելը էզայ, գործելը էմ, գործելը ըլլալու էմ :

103. Անորիշ դերբայը՝ էլ, իլ, ալ կը յանգի, և անորիշ եղանակով՝ անասհման ժամանակի մէջ կը յայտնէ գործօղութիւնը . ինչպէս, գործել, իօսիլ, երխալ :

Բայերն աս անորիշ յանգէն կ'ըսկսին խոնարհման մէջ մանիլու . և աս յանգէն կը բընտուղին բառցոյցի մէջ . որպէս թէ անորիշ դերբայը՝ օրինակի համար ըսէնք, բայերուն ուղղականն ըլլար, որովհետեւ էն պարզ ձեւնին է :

ԽՈՆԱՐՀՈՒՄ

104. Բային՝ դէմ, թիւ, եղանակ, ժամանակ ցուցնելու համար կրած փոփոխութիւններուն կ'ըսվի խոնարհում :

Աս խոնարհման կերպը՝ բայերուն վերջաւոր

ըու թիւնէն կախում ունէ :

105. Իայերն իրեք կերպ վերջաւորութիւն կամ յանգ ունէն . որով իրեք դաս կը բաժնվին :

1^ն յանգ ԵԼ՝ ինչպէս , ԳՈՐԾԵԼ .

2^դ յանգ ՎԻԼ՝ ինչպէս , ԳՈՐԾՎԻԼ .

3^ր յանգ ԱԼ՝ ինչպէս , ԽՆՏԱԼ :

106. Ինդհանրապէս՝ էլ յանգը ներգործաւ կան բայերուն յատուկ է . վիլը՝ մինակ կրաւորականներուն է . «ը՝ գլխաւորապէս չէզոքներուն :

107. Ըս իրեք յանգերուն ամէն մէկն իրարմէ տարբեր խոնարհում ունէ , և գլխաւորապէս կատարեալին մէջ կը զանազանին . միւս ժամանակներն իրարմէ կը շինվին . ինչպէս կը տեսվի հետեւեալ համացոյց պատկերին մէջ : Կատարեալին շէնքը՝ գլխաւոր դիտելու և ուսնելու բան է խոնարհումներու մէջ . վասն զի անով՝ միւս ամէն ժամանակներուն կազմութիւն գաղտնիքը դուրս կը ցայտէ . և հոն կ'երեւի բայերուն ճիշտ արմատը , իր վրայ եկած էվէլորդ գիրերէն մերկացած , թէ պարզ արմատ ըլլայ և թէ կցորդաւոր արմատ , թէ միավանկ ըլլայ և թէ բազմավանկ : Եւ բայերուն արմատներն ալ զէկ որոշել ու միտք առնելէն ետեւ՝ ամէն բայի և ամէն յանգի խոնարհում դիւրաւ կ'ըմբռնելի :

Համայնաց պատկեր խոնարհման իրեք յանգեքուն

1

2

3

ԿՈՆՉԵՆՉ	ԷԼ		ՎԻԼ		ԱԼ	
	1 ^ն օրինակ (17)	2 ^դ օրինակ (17)	1 ^ն օրինակ (17)	2 ^դ օրինակ (17)	1 ^ն օրինակ (17)	2 ^դ օրինակ (17)
ԿՈՆՉԵՆՉ ԿՈՆՉԵՆՉ	ԳՐԵԾ ԷՇԻ	ՍԵՆ	ԳՐԵԾ ԷՇԻ	ՍԵՆ	ԻՆՍՏ	ԳՐԵԾ ԷՇԻ
	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ
ԿՈՆՉԵՆՉ ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ
	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ
ԿՈՆՉԵՆՉ ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ
	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ	ԿՈՆՉԵՆՉ

108. Լ'սկէ ետեւ զնէնք խոնարհման ամբողջ օրինակները . ամէն մէկին վրայ գիտելիքներն ու արտուղրութիւններն իրենց տեղը նշանակելով : Եւ այց նախ՝ հական բայն ամբողջ խոնարհէնք հոս , իբր նախատիպ նմանայանգ բայերուն , նա՛ գրէթէ և այլ ամէն բայերուն :

109. ԷԱԿԱՆ ԲԱՅԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ (արմատ է) (1) .

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Կապարեալ Լ'նցեալ .

- Ելաի . էցի , էցիր , էց .
- Յոչնակի . էցինք , էցիք , էցին :

Լ'նկապար Լ'նցեալ .

- Ել . էի , էիր , էր .
- յոչ . էինք , էիք , էին :

Ներկայ .

- Ել . էմ , էս , է .
- յոչ . էնք , էք , էն :

(1) Որովհետեւ հական բային արմատն է է . նոյն գիրը վերէն ի վար անխոփոս պահէցինք խոնարհման մէջ , և կը պահէնք միւս ամէն բայերու յանդերուն մէջ : Աս է արմատը երբեմն է գրի փո . ինչը՝ արդի լեզուին մէջ սնտի և անօգուտ զժարութիւն մ'էվէլ ցընէլ է :

Ապարհի .

- Ել. էլու էմ, էլու էս, էլու է .
 յոչ. էլու էնք, էլու էք, էլու էն :

ՀՐԱՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ կամ Ապարհի .

- Ել. է, մի էր .
 յոչ. էցէք, մի էք :

ԴԵՐԱՆՑ
 { անշեալ . ամ .
 ներկայ . օղ .
 ապարհի . էլու .
 անորիշ . էլ (1) :

ԱՌՁԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ — ԷԼ յանգ ներգործական .

110 . ԱՌՁԻՆ ՕՐԻՆԱԿ — ԳՈՐԾԷԼ (արմատ գործ) .

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Կատարեալ Անշեալ .

- Ել. գործէցի, գործէցիր, գործէց .
 յոչ. գործէցինք, գործէցիք, գործէցին :

(1) Թէպէտեւ աս բային ամէն եղանակներն ու ժամանակները սովորյալ չ'է գործածել . մենք իբր յանգ դրինք բայն անբողջ խոնարհելու համար : Սովորութիւնը՝ երբ ին տեղ՝ եւայ, ելաւ էմ ին տեղ՝ ըլլաւաւ էմ կը բանեցնէ :

Անկարգ Անյեալ .

- Ել . գործէի , գործէիր , գործէր .
 յո՛ր . գործէինք , գործէիք , գործէին :

Ներկայ .

- Ել . գործէմ , գործէս , գործէ .
 յո՛ր . գործէնք , գործէք , գործէն :

Ապառնի .

- Ել . գործէլու էմ , գործէլու էս , գործէլու է .
 յո՛ր . գործէլու ենք , գործէլու էք , գործէլու են :

ՀՐԱՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ կամ Ապառնի .

- Ել . գործէ , մի գործեր .
 յո՛ր . գործէցէք , մի գործէք .

ԴԵՐԱՅ	}	անյեալ .	գործած .
		ներկայ .	գործող .
		ապառնի .	գործելու .
		անորիշ .	գործէլ :

